# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ

| ԹԵՐԹ | ԱՆՎԱՆՈՒՄ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|
| *ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ* | | |
| 1 | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ՑԱՆԿ,ԲԱՑԱՏՐԱԳԻՐ | ՃՇ - 1 |
| 2 | ՇԵՆՔԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ | ՃՇ - 2 |
| 3 | ՏԵՍՔ 1 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԵՎ ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՃՇ - 3 |
| 4 | ՏԵՍՔ 2 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԵՎ ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՃՇ - 4 |
| 5 | ԿՏՐՎԱԾՔ 1-1 | ՃՇ - 5 |
| 6 | ԴՌՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ | ՃՇ - 6 |
| 7 | ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՉԱՓԱԳՐՈՒԹՅՈՒՆ | ՃՇ - 7 |
| 8 | ՀԱՏԱԿԱԳԻԾ ԵՎ ԿՏՐՎԱԾՔ 1-1 | ՃՇ - 8 |
| 9 | ՄԻՋՆՈՐՄՆԵՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՍԽԵՄԱ | ՃՇ - 9 |

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## 1. Ներածություն

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովսեփյան փողոցի թիվ 83 բնակելի շենքի երկրորդ շքամուտքի աստիճանավանդակի վերակառուցման աշխատանքային նախագիծը կազմվում է Դիլիջանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի հիման վրա : Նախագիծը կազմված է Դիլիջանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա : Շենքի աստիճանավանդակի արտաքին պատերը շարված են ապակեբլոկներով,որոնք ենթակա են քանդման: Հարթակները իրականացված են կոնսուլային եղանակով,որոնց ամրացման համար նախագծով նախատեսված է մետաղական սյուների մոնտաժում եզրային հատվածներով բոլոր հարկերում: Ապակեբլոկի փոխարեն նախագծով նախատեսված է պեմզաբլոկի շարվածք: Շարվածքը թեթև լինելու համար նախատեսված է փակ պեմզաբլոկ, անցքերի մեջ դատարկ թողնելու համար: Պեմզաբլոկե շարվածքը ամրանավորվում է A1 դասի ամրաններով համաձայն նախագծի,ամրանները եզրերում ամրացվում են մետաղական գոյ. ունեցող կոնստրուկցիաների եռակցման մեթոդով:Պատուհանների տեղադրման համար նախատեսված է բարավոյի փոխարեն անկյունակներ,պատի ամբողջ երկարությամբ,որոնք ամրանում են մետաղական գոյ. ունեցող կոնստրուկցիաներին եռակցման մեթոդով:

## 2. Շրջակա միջավայրի պահպանում

Շինարարության ժամանակ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել շրջակա միջավայրի վրա: Աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտ է խնամ- քով վերաբերվել մոտակա ծառերին և թփերին, պահպանելով նրանց վնասումից և ոչնչացումից: Աշխատանքների ավարտից հետո անհրաժեշտ է մաքրել շրջակա տարածքը շինարարական աղբից, բեռնումով և տեղափոխումով լցակույտ:

Շին. կազմակերպության աշխատողները և ղեկավարները պետք է միշտ հիշեն շրջակա միջավայրի պահպանման մասին : Շինարարության ժամանակ պետք է պահպանել հետևյալ նորմատիվային փաս-տաթղթերը. ՇՆ և Կ III - 4.80 «Աշխատանքի անվտանգությունը շինարարությունում» ՇՆ և Կ III - 1.75 «Շինարարական արտադրության կազմակերպում»:

ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովսեփյան փողոցի թիվ 83 բնակելի շենքի երկրորդ շքամուտքի աստիճանավանդակի վերակառուցման աշխատանքային նախագիծը մշակված է համաձայն ՇՆուԿ 3.01.01 « Շինարարության արտադրության կազմակերպում » և ՇՆ - 440 - 7 « Շինարարության տևողության նորմէ ձեռնարներին համապատասխան :

Կատարվում է աստիճանավանդակների վերակառուցման աշխատանքներ, որը ըստ ՀՀՇՆ 2 - 02 - 94 - ի գտնվում է սեյսմիկ 2 - րդ գոտում :

- Մինչև շինարարական աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կատարել կազմակերպչական , տեխնիկական և նախապատրաստական աշխատանքներ
- Հակահրդեհային անվտանգությունը շին հրապարակում և աշխատանքի տեղամասերում պահպանել համապատասխան հակահրդեհային անվտանգության կանոններ ձեռնարկի պահանջներով
- Հողային աշխատանքները կատարել համաձայն աշխատանքային գծագրերի և ՇՆուԿ 3 - 02 - 01 - 87 - ի ձեռնարկի պահանջներով
- Կրող և պատող կոնստրուկցիաների աշխատանքները կատարել համաձայն ՇՆուԿ 3 - 03 - 01 - ի և ՇՆուԿ III - 3 - 80 ձեռնարկների և աշխատանքնային գծագրերի պահանջներով

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ն Գ Ի | ՄԱԿՈՒՆՑ | | ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Հովսեփյան փողոցի թիվ 83 բնակելի շենքի երկրորդ շքամուտքի աստիճանավանդակի վերակառուցում | | | |
| ԳԾԵՑ | ԱՆՏՈՆՅԱՆ | | | | | |
| ՍՏՈՒԳԵՑ | ՄԱԿՈՒՆՑ | | ԱՍՏԻՃԱՆԱՎԱՆԴԱԿ | ՓՈՒԼ | ԹԵՐԹ | ԹԵ |
| | | | | Ա Ն | ՃՇ - 1 | |
| | | | Աշխատանքային գծագրերի ցանկ,բացատրագիր | «ԳՈԼԴ - ՆԵԹ» ՍՊ | | |
| | | | | | | |